ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություն կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի հունիսի 01-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառը և կատարված փոփոխության համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել ձեռքբերվող տաբատների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

Փոփոխության նկարագրություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժնով նախատեսված տաբատների մասով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում կատարվել է լրացում՝ հետևյալ բովանդակությամբ. **«Տաբատը՝ զույգով, յուրաքանչյուր անձի համար պատրաստվում է 1 զույգ (2 հատ) տաբատ, արդյունքում պատրաստվող տաբատների ընդհանուր քանակը՝ 100 զույգ:»:**

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի փոփոխված հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա ժամը 11:00-ն:

Փոփոխության հիմնավորում՝ փոփոխությունը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: